



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱԶՈՐ  
ՀԱՄԱՅՆՔ**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2**

20 ՄԱՐՏԻ 2025թվական

**ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍԻՒ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու բոլոր անդամներ:  
Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝  
Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մրազ Միրոյանը  
Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Նաիրա Գեվորգյանը  
**ԼՍԵՑԻՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱԶՈՐ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ  
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ**

**(Ձեկ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ)**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համայնքի ավագանին

**ՈՐՈՇԵՑ՝**

Հաստատել և ընդունել ի գիտություն Մեծաձոր համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2024 թվականի տարեկան բյուջեի կատարողականի մասին՝ համաձայն հավելվածի:

Կողմ-3

Դեմ-0

Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 6-Ա)

**ԼՍԵՑԻՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱԶՈՐ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 02-Ն  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Ձեկ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ)**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, Մեծաձոր համայնքի ավագանին

**ՈՐՈՇԵՑ.**

1. Մեծաձոր համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀ Արագածոտնի մարզի Մեծաձոր համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին» N 02-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման 1-ին կետով ընդունված կանոնակարգը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Կողմ-3

Դեմ-0

Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 7-Ա)

**ԼՍԵՑԻՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՁԵԿ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ)**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով՝ Մեծաձոր համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել՝

- 1) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանների վարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:
- 2) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ-3

Դեմ-0

Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 8-Լ)

**ԼՍԵՑԻՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(ՁԵԿ. ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ)**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետով, համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել Մեծաձոր համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-3

Դեմ-0

Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 9-Ա)

Ավագանու անդամներ

ՍՈՒՏԱԼ ԱՔԱՍՅԱՆ

ԹՈՌՈՒՆ ՇԱՄՈՅԱՆ

ՀԵՐԻՔ ՇԱՄՈՅԱՆ

*(Handwritten signatures)*

Համայնքի ղեկավար՝ ՄՐԱԶ ՄԻՐՈՅԱՆ

Նիսպրն արձանագրեց՝ Նաիրա Գեվորգյանը

